

Լուրեր

Թուրք մտավորականները չեն պատժվի

Անկարայի դատախազը վճռել է քրեական գործ չհարուցել այն մտավորականների դեմ, ովքեր ներողություն էին խնդրել հայերից 1915թ. դեպքերի համար: Հիշեցնենք, որ մի քանի անհատ դիմել էին դատարան՝ պահանջելով քրեական պատասխանատվության երթարկել անհատներին, ովքեր նախաձեռնել էին ինտերնետային ակցիան:

Նշենք, որ ելնելով Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301 հոդվածից, մտավորականները կարող էին քրեական պատասխանատվության երթարկվել «թուրք ազգին բացահայտ վիրավորանք հասցնելու» համար:

«Որոշվել է, որ քրեական հետաքննություն հարուցելու անհրաժեշտություն չկա՝ ելնելով այն իրավական հիմքերից, որ հակադիր կարծիքները ժողովրդավարական երկրներում նույնպես պաշտպանվում են խոսքի ազատությամբ», – նշված է դատախազության գրասենյակի հաղորդագրությունում, որը վերջապես է դրել թուրք մտավորականության դեմ բոլոր բողոք-հայցերին:

Հայաստանի և Թուրքիայի մշակութային մերձեցումը



Մինչ դիվանագիտական հարթակում քաղաքական գործիչները շարունակում են ջանքեր ներդնել Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների բարելավման գործընթացում, երկու պետությունների միջև արդեն իսկ ուրվագծվում է մշակութային մերձեցումը: Թուրքիայի նախագահական սիմֆոնիկ նվագախումբը մտադիր է այցելել Երևան:

Թուրքիայի նախագահական սիմֆոնիկ նվագախմբի ղեկավար Ռենջին Գյոքմենը հաստատել է նման այցի հավանականությունը: «Հնարավոր է, որ նվագախումբը մեկնի Հայաստան: Սակայն մենք, նախ և առաջ պետք է գնահատենք հարաբերությունների բարելավման գործընթացը», – նշել է Գյոքմենը՝ հավելելով, որ նման շրջապայությունը, որը նպատակաուղղված կլինի երկու երկրների միջև հարաբերությունների բարելավմանը, կարող է իրականացվել միայն Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլի հովանու ներքո:

УРОК 8
ԴՄԱ 8
ЗВУК БУКВА

[В]	Վ, վ
[Ф]	Ֆ, ֆ

Усвоение произношения армянских звуков [в], [ф] не представляет трудности, так как они имеют свои соответствия в русском языке и произносятся, как русские в, ф. Обозначаются буквами վ, ֆ.

Примеры:
վեպ [վэп] роман
վատ [վат] плохой, плохо
վազել [վазэл] бегать, бежать
ֆաբրիկա [ֆабрика] фабрика
ֆանտազիա [ֆантазիա] фантазия
ֆակուլտետ [ֆакултэт] факультет

В армянском языке слова, начинающиеся с согласного ֆ, главным образом заимствования.

Буквы վ, ֆ обычно произносятся так, как пишутся. Но иногда в середине и на конце слова звук վ [в] оглушается и произносится [ф], т. е. пишется վ, но произносится [ф], например: ափտո [афто] автомашина
հարաֆ [һараф] юг
հարաֆային [һарафайин] южный

Запомните: Сочетание звуков [во] в начале слова обозначается буквой վ. Исключение составляют русские слова, начинающиеся с [во]. Они пишутся через վո, например: Վոլգա [волга] Волга

Վոլոդյա [володья] Володя
Վորոնեժ [воронэж] Воронеж
վոլտ [волт] вольт
Вспомните, что слова վ, ովքեր как исключение произносятся [ов], [овкэр].

Напишите прописные и строчные буквы վ, վ, ֆ, ֆ.



Буква և

Буквой և обозначается сочетание звуков [эв] и [ев]. Она не имеет прописной буквы. Буква և встречается в середине и на конце слова и произносится [эв], например: բարև [барэв] здравствуй (-те)!
արև [арэв] солнце
որևէ [орэвэ] какой-либо
երևան [ерэван] Ереван
Исключение составляет сложное слово նաև (նա+և) – так же, в том числе, которое произносится [найэв].

Запомните: если в начале слова произносится [ев], то пишется վ, если в середине и конце слова произносится [эв], то пишется буква և. Исключение составляют те сложные слова, второй компонент которых начинается с վ (после ե), например: տարեվերջ [тарэвэрдж] конец года
հոգեվիճակ [һок'эвич'ак] душевное состояние

При самостоятельном употреблении և – сочинительный союз соответствует русскому и и произносится [ев]. ես և նա [ес ев на] я и он (она)
Աշոտը և Սուրենը [ашоты ев сурэны] Ашот и Сурен

լավ և վատ [лав ев ват] хороший и плохой, хорошо и плохо.
Таким образом, вы уже знаете, что соединительному союзу и в армянском языке соответствуют два союза ու և, ср.:

ես ու դու [ес у ду]
ես և դու [ес ев ду] } я и ты
Из них более употребителен союз և.

Напишите букву և.



СЛОВАРНЫЙ ЗАПАС

վազել [вазэл] бегать, бежать
վնաս [вынас] вред
ավելի [авэли] более
վախ [вах] страх
ավտոբուս [афтобус] автобус
վրա [выра] (последлог) на
նավ [нав] корабль
լավ [лав] хороший, хорошо
հարավային [һарафайин] южный
վախեցնալ [вахэнал] бояться, пугаться, испугаться
օվկիանոս [овкйанос] океан
երևալ [ерэвал] виднеться, показываться, появляться
появиться
արև [арэв] солнце
վերև [վэрэв] верх, наверх
մինչև [минчэв] до
մինչև երեկո [минчэв ерэко] До вечера!
Արամը և Սուրենը աշակերտներ են [арамы ев сурэны ашакэртнэр эн] Арам и Сурен – ученики.
օր ու գիշեր [ор у гишэр] день и ночь
Նրա անունը Կարեն է [ныра ану–

ны Карэн э] Его зовут Карен.
Կարմիր և սև մատիտներ [кармир ев сэв матитнэр] красный и черный карандаши
Արևը լուսավորում է [арэвы лусаворум э] солнце освещает.


Կարինեն և Սարիամը միասին են սովորում [каринэн ев мариамы миасин эн соворум] Карине и Мариам учатся вместе.

ինչու [инчу] почему
օրինակ [оринак] пример
Արարատ [արарат] Арарат
մտնել [мытнэл] входить, войти, заходить, зайти
գնալ [гынал] уходить, уйти, уезжать, уехать
լուսամուտ [лусамут] окно
պահարան [паһаран] шкаф
ընկնել [ынкнэл] падать, упасть
գրիչ [гырич] ручка
բառարան [бар'аран] словарь
պատանի [патани] юноша
դպրոց [дыпроц] школа
բժիշկ [быжишк] врач

Переведите следующие предложения:

1. Ես սիրում եմ ամեն երեկո գրումնել:
2. Ես սիրում եմ իմ մայրենի լեզուն:
3. Ես ամեն օր պարապում եմ:
4. Նա ամեն ինչ գիտի:
5. Դա լավ օրինակ է:
6. Այն ժամանակ ես այդ մասին չգիտեի:
7. Այսօր ցուրտ է:
8. Իմ անունը Աննա է:
9. Ես ապրում եմ Դոնի Ռոստովում:
10. Ես ունեմ շատ ընկերներ:

Курс ведет
Армине ОВСЕПЯН



ԱՍՏՕՈՒ ՏԱՍԸ ՊԱՏՎԻՐԱՆՆԵՐԸ

4 Հիշիր շաբաթ օրը, որպեսզի սուրբ պահես այն: Վեց օր պիտի աշխատես և կատարես քո բոլոր գործերը, յոթերորդ օրը քո Տեր Աստծո շաբաթ օրն է:

Այս պատվիրանը մեզ ուսուցանում է շաբաթվա մեկ օրը սուրբ պահել, այսինքն՝ հեռու մնալ աշխարհիկ գործերից և այդ օրն ամբողջությամբ նվիրել Աստծո փառավորմանը և հոգևոր գործերին: Հրեաների համար այդ օրը շաբաթն է, որը նշանակում է «հանգիստ»: Աստված վեց օրում արարածը աշխարհը և յոթերորդ օրը հանգստացավ, որպեսզի մենք էլ վեց օր զբաղվենք մեր մարմնական գործերով և յոթերորդ օրը թողնենք աշխարհիկ գործերն ու հոգևորը:

Քրիստոնյաների համար հանգստի օրը ոչ թե շաբաթն է, այլ կիրակին՝ ի հիշատակ մեր Փրկչի հրաշափառ հարության: Կիրակին Քրիստոսի մարդեղությանը փրկագնված նոր արարչության տոն է, որով մեզ տրվեց նոր կյանք և նոր ժամանակ: Իսկ շաբաթ օրը քրիստոնյաների կողմից պատվվում է

որպես սրբերի հիշատակության օր: Կիրակին պետք է նվիրել Աստծուն. պետք է գնալ եկեղեցի և մասնակցել պատարագի, տանն աղոթել ու հոգևոր ընթերցանությամբ զբաղվել, օգնել աղքատներին ու կարոտյալներին, այցելել հիվանդներին և այլն: Չի կարելի այդ օրն աշխատել առանց ծայրահեղ անհրաժեշտության կամ էլ՝ ծուլության պատճառով չգնալ եկեղեցի: Այս պատվիրանը խախտում են ոչ միայն նրանք, ովքեր չեն գնում եկեղեցի, այլև նրանք, ովքեր գնում են ակամա, պարտադրաբար կամ ուղղակի հետաքրքրության համար, ովքեր անտարբեր կանգնում են եկեղեցում, բանբասում, շատախոսում, որոնց մտքերը այս ու այն կողմ են թափառում: Այս պատվիրանը խախտում են նաև նրանք, ովքեր աներկյուղ և անպատկառ կերպով են կատարում

իրենց հոգևոր սպասավորությունը, աղոթում ու երգում են ոչ թե Աստծո փառքի, այլ ինքնաբավարարման, ինքնամեծարման կամ մարդահաճության համար՝ գայթակղության առիթ դառնալով ուրիշների համար: Կիրակի օրը հատկապես պետք է զգուշանալ մեղքերից և մեղսահարույց հանդիպումներից ու շփումներից, հեռու մնալ որկրամոլությունից, արբեցողությունից, բանբասանքից, չարախոսություններից, հայիոյանքներից և այլն: Մեղքի տակ են ընկնում նաև նրանք, ովքեր անտեղի արգելում են իրենց հարազատներին, ենթականերին եկեղեցի գնալ Տիրոջ սուրբ օրը՝ աղոթելու և արարողություններին մասնակցելու: Օրհնությամբ և աղոթքով՝ Տեր Անանիա քին Բաբայան